

ISSN 1829-0116



ԻՔ
2021
1

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ



ՀՀ ԳԱՎ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՆԴԵՍ

ԻԲ

2021 - 1



**Տպագրվում է ՀՀ ԳԱՄ Մ. Աբեղյանի անվան Գրականության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ**

**Հանդեսի գլխավոր խմբագիր՝
Սուրեն Աբրահամյան**

Գրական խորհրդի անդամներ՝
բ.գ.դ. ԳԱՄ թղթ. անդամ Աելիտա Դոլուխանյան
բ.գ.դ. Վարդան Դևրիկյան
բ.գ.դ. Վազգեն Գաբրիելյան
բ.գ.դ. Պետրոս Դեմիրճյան
բ.գ.դ. Վանո Եղիազարյան
բ.գ.դ. Սուսաննա Հովհաննիսյան
բ.գ.թ. Սիրանուշ Մարգարյան
բ.գ.թ. Արմեն Ավանեսյան
բ.գ.թ. Արքմենիկ Նիկողոսյան

ԲԱՐՈՒ ԵՎ ՉԱՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԱՐՁԱԿՈՒՄ

(ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՔԵՇԻՇՅԱԼ. «ՍԱՏԱՆԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ»)

Բանալի բառեր - ժամանակակից հայ արձակ, Հարություն Քեշիշյան, «Սատանայի ընտրությունը», վեպ, Աստված, Սատանա, բարու և չարի հիմնախնդիր, խորհրդանիշ, քաղաքական ենթատեքստ

Յուրաքանչյուր բանական արարած, աշխարհ գալու պահից սկսած, փորձում է իմաստավորել իրեն շրջապատող հակադրամիասնություններն ու գտնել որոշակի բացատրություններ. սա բնականաբար ոչ միայն ոյուրին չէ, այլև գրեթե անիրագործելի: Ուստի անհասկանալին բացատրելու ճանապարհին անմիջապես ծագում է բարին և չարը տարբերակելու անխուսափելի ձգտումը: Այս երկու միմյանց հակադրվող, բայց միաժամանակ նաև լրացնող ու ընդգրկուն հասկացությունների մշտական առեղծվածը հետաքրքրել է թե՛ փիլիսոփաներին, թե՛ արվեստի սվիրյալներին և թե՛ հասարակ մարդկանց, որոնք էլ անընկալելին բացատրելու բարդագույն խնդիր լուծումը գտնելու հույսով հաճախ դիմում են Աստվածաշնչի օգնությանը: Իսկ ի՞նչը կարող է լավագույնս բացատրել բարու և չարի սահմանազատումը, եթե ոչ Աստծո և Սատանայի ավանդական հակադրումը: Բայց ժամանակը ժայռաբեկոր չէ. այն անընդհատ փոփոխվում է, զարգանում, ծնունդ տալիս նորանոր մոտեցումների ու գաղափարների:

Ասվածի ապացույցը կարելի է գտնել գրական ասպարեզ մտնող մի շնորհալի գրողի՝ **Հարություն Քեշիշյանի**՝ 2000-ին լույսընծայված «Սատանայի ընտրությունը» խորագրով վեպում: Այն ուշարժան է ամենից առաջ հեղինակի ինքնօրինակ մտածողությամբ, կառուցվածքով, տարբեր մշակույթների (հունական առասպելներ, Միջնադարյան Իտալիա, Հայաստան) համակցությամբ, ինչպես նաև արդի քաղաքական աշխարհի կրթին ենթաշերտերի բացահայտմամբ և, որթերևս ամենից կարևորն է, Աստծո և Սատանայի վերաբերյալ դարերի ընթացքում հաստատված կարծրատիպի տապալմամբ: Այս վեպում գեղարվեստական

տպավորիչ պատկերներով միահյուսվել են երևակայականն ու իրականը, աստվածայինն ու աշխարհիկը, և արդյունքում ընթերցողի սեղանին է հայտնվել գրական մի ինքնատիպստեղծագործություն, որն ընթերցվում է գրեթե մեկ շնչով՝ ստիպելով խորհել ու վերստին արժևորել սեփական ներաշխարհը:

«Սատանայի ընտրություն»-ն ունի կառուցվածքային բավական ուշագրավ ընդգրկում՝ Երկնքի ու Երկրի արդիականացված միահյուսում, անգամ քաղաքականացում (Սահմանադրություն, հանրաքվե, արտակարգ իրավիճակ), Աստվածաշնչից հայտնի կերպարների ժամանակակից մեկնաբանում. դարեր ի վեր դավաճան համարվող Հուդան Աստծո կողմից հռչակվում է կոռուպցիոներ, իսկ Պետրոսը պատասխանատու պահերին մշտապես խուսանավում է...Առաջին հայացքից թվում է, որ խնդրո առարկա վեպը զուրկ չէ ինչ-ինչ թերացումներից, հեղինակային անհարկի միջամտություններից. վերջնահաշվում, սակայն, պարզվում է, որ դրանք բնավ չեն ստվերում հյուսվածքի խորքը: Ինչպես ռուսական քաջածանոթ առածն է ասում՝ «Ամեն թերություն ունի իր առավելությունը»: Խոսքս վերաբերում է վեպում հայտնված տարատեսակ դևերի (Լյուցիֆեր, Մեֆիստոֆել, Ազազել, Բեհեզդեբուղ կամ Արուսյակ)չափազանցված հիշատակմանը, որոնք, ըստ հեղինակի մտահղացման, բնակվում են Երկնքի ու Երկրի սահմանագծում: Գուցե սա կարելի է դիտարկել իբրև սոսկ հավելյալ, ընդհանուր դիպաշարի հետ այնքան էլ չառնչվող դրվագ,բայց մյուս կողմից, հաշվի առնելով վերոնշյալ դևերի մեկնումները, առավել ևս նրանց հատուկ բնակավայրի՝ Դևերի Երկնքի ստեղծումը, կարելի է ասել, որ հեղինակը կերտել է ուրույն խորհրդանիշներ:

Հայտնի է,որ Լյուցիֆերը հռոմեացիների համար եղել է«այգաբացի աստղ»,իսկ Մեֆիստոֆելին՝ Վերածննդի ժամանակաշրջանի չար ոգուն, հանդիպում ենք երևելի գերմանացու՝ Յ. Գյոթեի հանճարեղ «Ֆաուստ»-ում: Ինչ վերաբերում է Ազազելին՝ «Մեղքերի քավության խոխազին», ապա ընթերցողին նա հայտնի է ռուս նշանավոր գրող Մ. Բուլգակովի «Վարպետը և Մարգարիտան» ինքնատիպ վեպից, ուր նա մշտապես ուղեկցում է Սատանային՝ Վոլանդին, միևնույն ժամանակահատվածում, որը Հին Կտակարանում հիշատակվում է որպես փոշտացիների աստված, վեպում կրում է նաև երկրորդ անունը՝ Արուսյակ. նա, հարկավ, Վեներայի հայերեն համարժեքն է և, ի թիվս այլ ձևերի, ունի նաև Լուսաբեր և Աստղիկ անվանումները: Ասել է թե՛ դևերի ընտրությունը բնավ պատահական չէ, քանի որ նրանցից յուրաքանչյուրի դերն էական է: Ուստի ուշագրավ է, որ տրամաբանորեն հայտնվում է հաջորդ խորհրդանիշը՝

Աստղիկը, որի անունը կարելի է ստուգաբանել ոչ միայն որպես հիշյալ Արուսյակի համարժեք, այլև փոքրիկ աստղ:Աստղը, արդարև, ունի ճանապարհը լուսավորելու իմաստ, և այս վեպում հենց Աստղիկն է ցույց տալիս Սատանային գտնելու ուղին: Մյուս կողմից, սակայն, նա փոքրիկ լուսատու է, որովհետև առաջնորդում է Միքայել Հրեշտակապետին: Ի դեպ, Հարություն Քեչիշյանի վեպում խորհրդանշանները մշտապես ուղեկցում են դիպաշարի զարգացմանը, որոնց դրանց կանդորադառնանք հընթացս:

Խնդրո առարկա վեպի առանցքային կերպարներից է Միքայել Հրեշտակապետը, որը նրբամիտ հեղինակի շնորհիվ ունի երկակի մեկնություն. մի կողմից նա Աստծո ծառան է, մյուս կողմից՝ հեղինակի քաղաքական որոշակի հայացքների կրողը և, իբրև այդպիսին, միաձուլվում է Աստծուն ու միաժամանակ հակադրվում նրան: Միանգամից նկատենք, որ սա նրբին ենթաշերտ է. այդպիսին է մասամբ նաև Աստծո կերպարակերտումը, որը, ինչ խոսք, բավական համարձակ մոտեցում է:

Միքայել Հրեշտակապետը Սուրբ Գրքի էջերից մարդկությանը հայտնի է որպես երկնային գորքերի հրամանատար, որը մշտապես մարտնչում է Սատանայի և վերջինիս զինակիցների դեմ: Ուստի արվեստի աշխարհում նա պատկերվում է զրահավորված, սուրը ձեռքին և վիշապը ոտքերի տակ: Սակայն նրան կարելի է հանդիպել նաև կշեռքը ձեռքին, որչափում է ննջեցյալների հոգիները: Հ. Քեչիշյանի վեպում նա ստանում է նոր, որոշ դեպքերում անգամ ցնցող մեկնություն: Այսպես՝ գործողությունների ընթացքում պարզվում է, որ Միքայելն ու Սատանան ընկերակից են: Ահա թե Սատանայի թեկնածու պատգամավորի հետ զրույցում, պատմելով ճշմարտություն փնտրող տղայի ուշագրավ պատմությունը, ինչ է հավաստում ինքը՝ Հրեշտակապետը՝ անդրադառնալով այդ պատուհան փորձության ենթարկած Սատանայի և իր կապին. «...անձանոթը շրջվեց, որ հեռանա, իսկ Սատանան ձայնեց նրա ետևից ու ասաց. -Սպասի՛ր Միքայել, այդ ո՞ւր առանց ինձ, -այս ասելուց հետո շտապեց իմ ետևից, թևանցուկ եղավ ինձ, ու մենք միասին հեռացանք»¹: Այսինքն՝ Միքայել Հրեշտակապետի և Սատանայի հակասությունն ու պայքարը գուտ թվացյալ են:

Այսպես՝ Սատանայի մահից հետո Աստված Միքայել Հրեշտակապետին գործուղում է երկիր՝ Նոր Սատանա գտնելու, այլապես սպառնում է հենց Միքայելին վերածել Սատանայի: Արարչի այս մոտեցումը բնականաբար չէր կարող հաճելի լինել Հրեշտակապետի սրտին, և այս

¹ **Քեչիշյան Հարություն**, Սատանայի ընտրությունը, Եր., 2020, «Արմավ» հրատ., էջ 134:

անցանկալի ավարտից խուսափելու նպատակով Միքայելը հարկադրված ստանձնում է այդ առաքելությունը. հենց սա է վեպի առանցքը, որի շուրջ ծավալվում են հետագա դեպքերը և բացահայտում ուշագրավ բազում նրբերանգներ ու ենթաշերտեր: Առաջին իսկ վայրկյանից, երբ Աստված սպառնում է Միքայելին անհնազանդության դեպքում Պրոմեթևսի նման գամել ժայռին, ընթերցողի համար պարզ է դառնում Սատանայի բացակայության դեպքում մարդկության համար ակնկալվող դժբախտությունների շարանի անխուսափելիությունը. չէ՞ որ ամենակալ Չևսը պատժել էր Պրոմեթևսին՝ մարդկությանը կրակ տալու, արվեստներ ու արհեստներ սովորեցնելու, այսինքն՝ դեպի առավել բարեկեցիկ կյանք առաջնորդելու համար: Ավելին՝ այս միտքը խորանում է, երբ դիպաշարի հետագա զարգացման ընթացքում հեղինակն անդրադառնում է Պանդորայի արկղիկի վերաբերյալ գաղափարին. հայտնի է, որ, իբրև Պրոմեթևսի գործած «հանցանքի» շարունակություն, Օլիմպոսի տիրակալը հրամայում է աստվածներին հողն ու ջուրն իրար խառնել և այդ խառնուրդից մի գեղանի աղջիկ կերտել, որ օժտված լինի մարդկային ուժով, քնքուշ ձայնով, իսկ հայացքն անմահ աստվածուհիների հմայքն ունենա: Եվ այսպես ծնվում է Պանդորան՝ բազում շնորհներ ստացած գեղեցկուհին, որը պետք է դժբախտություն բերեր մարդկանց: Աներկբայորեն իրականանում է Չևսի մտահոլացումը, և Պանդորան բացում է չարիքների արկղը, ու դատարկված արկղի հատակում մնում է միայն հույսը: Ահա թե ինչպես է այս ամենը բացատրում ինքը՝ հեղինակը, երբ Միքայել Հրեշտակապետն ազդարարում է. «Ամեն բան չէ, որ Աստծո կամքով է տեղի ունենում այս երկրի երեսին: Ամեն տերև ու ճնճողկ չէ, որ նրա կամքով է ընկնում: Իրականում աշխարհում գոյություն ունի հին հույների պանդորայի արկղիկը: Այո՛, այդ արկղիկը բացվել է: Եվ աշխարհը Աստծո կամքին զուգահեռ լի է շատ ու շատ գաղտնիքներով, որոնք անակնկալներ են պարունակում իրենց մեջ: Սատանայի մահը, քեզ ու մեզ բոլորիս համար պատրաստված Պանդորայի անակնկալն էր»¹: Այսպիսով՝ արձակագիրը վարպետորեն օգտագործում է հունական դիցաբանության այս հատվածնու ընթերցողին ուղարկում իր ուղերձը. Աստծո և Սատանայի, այսինքն՝ բարու և չարի համամասնության խախտմամբ աշխարհը կհայտնվի անմեկնելի քաոսի մեջ, սակայն, ինչպես հայոցիմաստուն առածն է պնդում՝ «Հույսը վերջինն է մահանում», ուստի աշխարհը կստանձնի իր նախկին տեսքը, և պատմության հավերժական ընթացքը երբեք չի խաթարվի:

Երկնքի Տիրակալի պատգամն իրականացնելու նպատակով Միքա-

1 Նույն տեղում, էջ 97:

յել Հրեշտակապետը ճանապարհ է ընկնում Երկիր մոլորակ: Այստեղ ևս հեղինակը գերծ չի մնացել խորհրդանիշների կիրառումից. Հրեշտակապետն ականա ձեռնարկում է երկու ճանապարհորդություն: Առաջին անգամ նա պատրաստվում է բավական «հանգամանալից», երբ, իր իսկ խոսքերով ասած, «տրագույն շրջանի բնակիչներից մեկը»¹ ուղղորդում է նրան կրել եվրոպականացված հագուստ. «Միքայելը հագել էր սև շապիկ, վրան գրոբայամբ «FU*K SATANA»: Ձեռքին ուներ փոքրիկ կաշվե պայուսակ, որի մեջ ուներ առաջին անհրաժեշտության մի քանի պարագաներ: Հագել էր ժամանակակից տաբատ՝ մի փոքր ճղճղված ոճի, և ամառային մուգ սև ակնոցներ էր դրել»²: Իսկ սրի բացակայությունը Հրեշտակապետը բացատրում է բավական յուրօրինակ կերպով. «Այս անգամ հանձնարարությանս բնույթն այլ է: Սուրը հարկավոր էր, երբ սատանայի հետ համագործակցաբար էի աշխատում, նրան մեկ-մեկ սաստելը չէր խանգարում»³: Բավական պերճախոս է Սատանայի ընտրության վայրը՝ Հայաստան. Աստված համոզված է, որ չարը մարմնավորող թեկնածուին կարելի է գտնել մի երկրում, ուր քառս է տիրում, որը, դժբախտաբար, սպառնում է մշտական դառնալ: Բացի այդ՝ վեպում հնչում է այն գաղափարը, թե Հայաստանում ևս ԱՄԾ-ն Սատանայի թեկնածու է փնտրում: Ինչ խոսք, անթաքույց է քաղաքական եկթաշերտը:

Միքայել Հրեշտակապետի հագուստի նկարագրությունը մատնանշում է մեկ այլ ցավալի երևույթ ևս. Հայաստանում մոռացության են տրվում ազգային բարքերը, տուրք է տրվում եվրոպականին, և արդյունքում հայտնվում է մշակութային անհասկանալի ու զավեշտական խառնուրդ: Այս առումով Հայաստանի պատկերը կարելի է եկթարկել նաև Նշանագիտական վերլուծության. այն այժմ, ցավոք, վերածվել է հակասությունների խառնարանի, ուր ազգը դարձել է խենթացած ժողովուրդ: Այդ է պատճառը, որ Հայոց աշխարհի բնակիչներն այլևս դադարել են զարմանալ և ամենայն հանգստությամբ ընդունում են ֆիլմի նկարահանման հրապարակում կիսամերկ հայտնված Հրեշտակապետին: Ահա թե ինչպես է հեղինակն անդրադառնում որևէ մեկի արտասովոր արտաքինի հանդեպ հայկական մտածողության խնդրին, երբ այն համեմատում է ամերիկյան և եվրոպական մոտեցման հետ: Եթե Միացյալ Նահանգներում կամ եվրոպայի որևէ անկյունում անգամ կիսամերկ հայտնված մարդը կարող է միանշանակ վերածվել կինոնկարի հերոսի, ապա «Հայաստանում նա ոչ մի դեր չէր ստանա, քանի որ կիամարեին,

1Տե՛ս Լույն տեղը, էջ37:

2 Լույն տեղում, էջ38:

3 Լույն տեղում:

որ նա անևորմալ է, գիժ: Այդ քաղաքում գժերը բավականին շատ էին, հատկապես վերջին շրջանում, ոմանք գիժ էին ի ծնե, ոմանք գիժ էին դառել կյանքի ծանր բեռի տակ, ոմանք էլ գիժ դառնալը ընդունել էին որպես կյանքում ինքնահաստատման միակ հնարավոր տարբերակ»¹:

Միքայելի ճամփորդությունների նկարագրության դրվագներում գրողը դիմում է ֆանտաստիկայի ժանրի տարրերին և կերև փոխադրամիջոց՝ ներմուծում է ժամանակի մեքենան: Այս հնարքը հնարավորություն է տալիս առաջ քաշելու երկու զուգահեռ գաղափար. գիտությունը թռիչքային քայլերով առաջ է ընթանում, և ժամանակի մեքենան կարող է իրականություն դառնալ, միաժամանակ այդ ընտրությունը գլխավոր հերոսին կարող է տանել թվացյալ սխալ ճանապարհով և որոշակի զուգորդումներ ստեղծել Հայաստանի և Միջնադարյան Ջորդանո Բրունոյի ժամանակների Իտալիայի միջև: Բացի այդ՝ թվում է՝ այս երկու ժողովուրդներն այնքան միահյուսված են, որ ժամանակի մեքենան գործի դնող Աստվածաշնչից հայտնի Ենովքը սխալմամբ հավաքում է Վերածննդի ժամանակաշրջանի Իտալիայի կողմ՝ հավաստիացնելով, թե չորս տարվա ընթացքում 1,5 միլիոն սուրբ է ընդունել, ուստի անգիր հիշում է Հայաստան տանող կողմ. այստեղ կարելի է դիտարկել երկու զուգահեռ: 2016-ին Կենտրոնական Իտալիան ցնցվեց ուժեղ երկրաշարժից, երբ այդ արհավիրքին զոհ գնացին բազում մարդիկ. ցանկացած անմեղ զոհ սուրբ է: Իսկ հաջորդ զուգահեռը կարելի է գուցե համարել Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի ժամանակ աշխարհով մեկ բարձրաձայնված եղեռնի 1.5 միլիոն զոհերի հիշատակումը, երբ աշխարհի բազում ծայրերից եկեղեցիների դռաները ցավակից դարձան հայոց անձայր վշտին:

Իսկ ամենից դիպուկ զուգահեռը թվացյալ սխալմունքն է. Հրեշտակապետը հայտնվում է միջնադարյան Իտալիայում և ականատես լինում Ջորդանո Բրունոյի մահապատժի արարողությանը, որտեղից նա ինքը հրաշքով է ազատվում: Սակայն մարգարեական են հանիրավի դատապարտված Բրունոյի խոսքերը, երբ դիմելով իր դահիճներին՝ նա ասում է. «Ձեր ձայնի մեջ դող եմ նշմարում, ինձ թվում է, որ դուք ավելի վախեցած եք, երբ ընթերցում եք այդ մեղադրական խոսքը, քան ես, երբ այն լսում եմ: Եվ գիտե՞ք ինչու. ես ձեզ կասեմ, թե ինչու, որովհետև բոլորդ էլ լավ եք գիտակցում. կա դատ, որը դուք իրագործեցիք իմ հանդեպ, և կա դատաստան, որի ժամանակ, երբ կրկին հանդիպեմք, ես կվկայեմ ձեր մասին»²: Խորհրդանշական առումով Միջնադարյան Իտալիան, որտեղ

1 Նույն տեղում, էջ 55-56:

2 Նույն տեղում, էջ 44:

մոլեգնում էին հակախսպանական ապստամբությունները, իսկ ինկվիզիցիան հետապնդում և մահվան էր դատապարտում առաջադեմ մտածողներին ու ժողովրդական առաջնորդներին, ցավալիորեն հիշեցնում է մերօրյա Հայաստանը, ուր ամեն մի լուսավոր երևույթ դատապարտված է կործանման, իսկ Բրուկոյի խոսքերը վկայում են ժամանակի՝ ամենաարդարադատ դատավորի անխուսափելի և իրավացի վերահասու դատավճռի մասին, որ սպասում է բոլորին առանց որևէ բացառության:

Միքայել Հրեշտակապետի երկրորդ ճամփորդությունն ի վերջո նրան բերում է Հայաստան, ուր և իրար հաջորդող իրադարձությունները հանրագումարի են բերում Աստծո ատյանի որոշման իրագործումը: Ուշագրավ է մեկ այլ փաստ ևս: Աստծո ատյանը գումարվում է Ամերիկայում: Սեմիոտիկ առումով այս ընտրությունը ևս ուշարժան է. իրեն «միջազգային ոստիկան» հռչակած երկիրն անհարկի միջամտություններ է կատարում, փորձում աշխարհին թելադրել իր կամքը, իսկ կամակատարներ, ցավոք, գտնվում են: Բացի այդ՝ Միացյալ Նահանգները հայտնի է որպես գերտերության խորհրդանիշ, որը սեփական անհասկանալի նախաձեռնությամբ իրեն է վերապահում ժողովուրդների ճակատագրեր որոշելու բացարձակ իրավունքը:

«Սատանայի ընտրությունը» վեպի մյուս առանցքային կերպարը, իհարկե, Սատանան է, որի ներհակ բնույթը բացահայտվում է քայլ առ քայլ, առաջացնում հակասական մտքեր ու անգամ համակրանք՝ դարերով չարիքի մարմնացում համարվող Տարտարոսի զագրելի Տիրակալի հանդեպ: Այս կերպարի հանդեպ հեղինակի ոչ ավանդական մոտեցումը բացահայտվում է ստեղծագործության հենց առաջին իսկ էջերում, երբ Ատյանում հնչում են Սատանայի մասին Պողոս առաքյալի հետևյալ խոսքերը. «Նոր Սատանա է հարկավոր, մի նոր մեղադրող, փորձիչ ու դատախազ»¹: Ինչպես քաջ հայտնի է, դատախազը հիմնական օրենքի ներկայացուցիչն է և դատավարության ընթացքում հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձի դեմ հարուցված փաստարկների համար պատասխանատու կողմը: Այսինքն՝ Աստծո առջև հողեղենների դատը ներկայացնում է Սատանան, որի վկայության համաձայն էլ սովորական մահկանացուն մուտք է գործում Դրախտ, արժանանում երկնային Տիրոջ բարեհաճությանը կամ հայտնվում փակ դռների հետևում ու հավիտյան «երագում» երկնային արքայության մասին: Ասվածը հաստատվում է, երբ կարդում ենք Սատանայի հոգեհանգստի ժամանակ(այն, իդեպ, Արարիչն ինքն է անձամբ անցկացնում) Աստծո արտաբերած հետևյալ տողերը. Ամենակալը պատմում է, թե ինչպես Ադամին և Եվային փոր-

1 Նույն տեղում, էջ 19:

ծուրթուն ենթարկելուց ի վեր ծնունդ առավ իրենց երկուսի փոխադարձ համագործակցությունը. «Հենց այդ օրվանից ի վեր ես ճանաչեցի և ձեռք բերեցի մի շատ կարևոր ծառայի: Մեկին, ում ես վստահում էի ամենից վտանգավոր ու նուրբ հարցերը: Իսկ նա ամեն անգամ ապացուցում էր իր հեռատեսությունն ու նրբանկատությունը: Չկար մեկը, ում կարող էի վստահել այդքան շատ: Այնքան շատ էի վստահում ես նրան, որ անգամ Սուրբ հոգու կողմից իմ Միակ ու Միածին Որդուն առաջնորդեցի անապատ փորձվելու Սատանայից»¹:

Իդեալ, նմանատիպ գաղափարի՝ Աստծո կողմից իր սեփական գավակին Սատանայի ձեռքով փորձության ենթարկելու և նրանց համագործակցության վերաբերյալ գաղափարի արժարժմանն ենք հանդիպում նաև պորտուգալացի նշանավոր գրող Ժոզե Սարամագոյի (1922-2010) «Հիսուսի Ավետարանը» աղմկահարույց վեպում²: Իսկ քիչ անց Տիրոջ բերանից հնչած հետևյալ բառերը՝ «Մենք այսօր ճանապարհ ենք դնում մեր պահապանին, հսկիչին: Մեզ շատ կպակասի քո չարածճի ներկայությունը»³, խորացնում ու հաստատում են Տարտարոսի Տիրակալի կարևորությունը Երկնային կյանքում:

Գաղտնիք չէ, որ սովորական մահկանացուին մշտապես հետաքրքրում է ոչ միայն բարու մարմնացում Աստծո եղբայրները, այլև չարիքի խորհրդանիշ Սատանայինը. գուցե ինչ-որ առումով Դժոխքի Տիրակալն ավելի է ձգում հողեղեններին, քանի որ առավել առեղծվածային ու մշուշապատ է իբրև ընկալելի կերպար: Ավելին՝ նա ունակ է կերպարանափոխվելու (նման դրվագներ կան նաև Ժ. Սարամագոյի հիշյալ վեպում), ուստի և չի կարող արժանանալ միանշանակ գնահատականի: Այսպես՝ «Սատանայի ընտրությունը» վեպում նա հայտնվում է մեկ իբրև գրադարանավար, ապա գիտնական, ճամփորդ և անգամ եղբայր: Բացի այդ՝ ցանկացած գայթակղություն ունի գրեթե վերերկրային հմայք, ուստի Սատանան ևս անասելի գեղեցիկ է: Այս ամենը հավաստվում է արդեն հիշատակված փորձության ենթարկվող տղայի պատմության դրվագում հեղինակի գրած հետյալ տողերով. «...այդ պահին անկողնու ծայրին նստած տեսավ մի հմայիչ տղամարդու, ոսկեներ, երկարածամ, առնական կազմվածքով, սպիտակ մաշկով, աչքերի խորը նայվածքով, գեղեցիկ արծվային քթով, որը նրան իշխանի տեսք էր տալիս: Այս կատարյալ մարմնի ու դեմքի վրա տղայի մեջ ամենից շատ տպավորվեց նրա ժպի-

1 Նույն տեղում, էջ 34:
 2 Մանրամասն տե՛ս **Շարուրյան Հայկանուշ**, «Հիսուսյան վեպերը» գրական զուգահեռներում, Եր., 2021, «Արմավ» հրատ., էջ 111-118:
 3 Նույն տեղում, էջ 35:

տը, որն այնքան հանգստություն էր պարունակում իր մեջ, վստահություն ու ուժ»¹:

Ուշագրավ է, որ այս նկարագրությանը դիպաշարի զարգացմանը զուգընթաց հաջորդում է առավել խոր պատկեր, որ գալիս է հաստատելու Սատանայի եզակիությունը. «Երբ ողջ ամբոխը ձեռքերը օդում նյարդային թափահարում էր, պատանին նրանց մեջ նշմարեց մեկին, ով կանգնած էր լուռ ու անհաղորդ: Իր հագուստով նա նման էր իշխանի: Իր ուսերին ուներ մանուշակագույն թիկնոց, որի վրա ինչ-որ գիտնական էր պատկերված»²: Ակնհայտ է, որ Սատանան ունի բավական ազնվական ու հմայիչ կեցվածք: Ի դեպ, այստեղ նշենք մի ուշագրավ փաստ ևս. ամերիկացի տաղանդավոր վիպասան Նորման Զինգլի Մեյլերը (1923-2007) իր «Որդու Ավետարանը» վեպում Սատանային այսպես է կերպավորում. «Նա արքայազնի պես գեղեցիկ էր: Նրա պարանոցին ոսկե շղթայով ոսկե զարդանախշ էր կախված. այդ զարդանախշը պատկերում էր մի խոյ, որն ուներ անասնական, սակայն երբևէ իմ տեսած ամենաազնվական դեմքը: Այս արքայազնի մազերը իմ մազերի նման երկար էին և փայլուն: Նա կրում էր թավշե թիկնոց, որը մայրամուտի բուրբ գույնն ուներ, իսկ գլխին ուներ արևի նման ոսկե թագ»³: Ակնհայտ է, որ երկրագնդի հակադիր ծայրերում գտնվող և բացարձակապես տարբեր մտածելակերպ ունեցող երկու գրողն էլ Սատանայի գեղեցկության և ազնվական կերպարի հարցում դրսևորում են զարմանալի միատեսակ մոտեցում:

Սատանայի եռթյան հիմնահարցը, անշուշտ, հուզում է նաև գիտնականներին, որոնք փորձում են սատանիզմին տալ որոշակի սահմանում, սակայն արդյունքում հայտնվում են բավական զավեշտական իրավիճակում. ասվածի ապացույցն է այն դրվագը, երբ գիտնական վարդապետի խոսքերին ի պատասխան Միքայել Հրեշտակապետը հայտարարում է. «- Ի՞նչ է խոսում, ես ոչինչ չհասկացա, մի՞թե չէր կարելի ավելի պարզ խոսել: Ի՞նչ է նշանակում Տրանսցենդենտալ լոգիկա»⁴: Ակնհայտ է, որ հեղինակը բավական նուրբ երգիծանքի է ենթարկում աստվածաբաններին, որոնք անհասկանալի հասկացությունների ցանցում խճճում են հասարակ մարդկանց ու բացարձակապես չեն օժանդակում կրոնական կնճռոտ հարցերի պարզաբանմանը: Ինչ վերաբերում է սատանիզմի գաղափարին Հայաստանում, ապա դատավճիռը դարձյալ ինչում է Հրեշտակապետի բերանով. «Լսի՛ր, Սատանան այնքան քաղցր

1 Նույն տեղում, էջ 123-124:

2 Նույն տեղում, էջ 126:

3 **Mailer Norman**, The Gospel According to the Son, Ballantine Books, New York, 1997, p 45

4 **Քեշիշյան Հարություն**, Սատանայի ընտրությունը, էջ 78:

Ե, Սատանան բարձրաճաշակություն է, սատանան փայլ է, շքեղություն է, ձգտում է: Սատանային հազարի մեջ հազարն էլ հետևում են, տասը հազարի մեջ տասը հազարն էլ հետևում են, հավատա միլիոնների և միլիարդների մեջ միայն հինգն են մերժում Սատանային: Իսկ այն, ինչ որ դու ինձ ցույց տվեցիր, անհիմն մարդկանց դատարկաբանություն էր»¹:

Ինչպես արդեն նշվեց, Սատանայի ընտրության համար Երկնային թագավորությունում ընտրվում է Հայաստանը: Սակայն հեղինակն այդքանով չի բավարվում և ընտրում է գրական հերոսուհուն՝ Աստղիկին, որն իր կանացի սուր մտքի և խորաթափանցության շնորհիվ առաջարկում է Սատանայի ամենաբնորոշ թեկնածուին՝ հայ պատգամավորին: Այն, որ այդ պատգամավորը աղջկա քեռին էր, այս ընտրությունը դարձնում է առավել քան պատճառաբանված. արյունակից հարազատի Եղությունը դյուրին է ճանաչել, ուստի պատգամավորի և Սատանայի նմանությունն ապահովված է: Այս միտքը հաստատվում է, երբ հանդիպման ժամանակ պատգամավորը բացահայտում է իր Եղությունը, և Հրեշտակապետը մտովի խորհում է. «Որքան լավ էր համապատասխանում նրա մտածելակերպը Սատանայի մտքին: Կարծես Սատանայի հայելային անդրադարձը լիներ, իհարկե միայն ներքինով»²: Ինչ վերաբերում է արտաքինին, ապա Սատանայի գեղեցկությունն անմրցելի է, իսկ մարդկային փառասիրությունը՝ անսահման: Ուշագրավ է, որ պատգամավորի՝ որպես Սատանայի, ընտրությունը ձախողվում է, որովհետև մարդը՝ իբրև մեղսավոր արարած, չի կարող բավարարվել իր ձեռքբերածով և ձգտում է բացարձակ իշխանության, այս դեպքում՝ Աստծո գահին: Եվ թվում է՝ ստեղծվել է փակուղի. չկա նոր Սատանա, խախտվել է Դրախտի և Դժոխքի դարեր ի վեր ամրագրված համամասնությունը, հասել է օրհասական պահը՝ Միքայել Հրեշտակապետը հարկադրված է կերպարանափոխվել և ստանձնել Սատանայի դերը, ու կրկին օգնության է հասնում Փրկիչը՝ Հիսուսը, երբ հարություն է տալիս Սատանային: «Չարմանայի է, բայց մենք բոլորս մոռացել էինք, որ դրախտում մահ չկա, քանի որ կա Հարությունը,- ասաց Հիսուսը»³:

«Սատանայի ընտրությունը»՝ ինչ-որ առումով փիլիսոփայական վեպի ամենաեական կերպարը, անտարակույս, Աստվածն է, որը բևեռի մյուս ծայրն է՝ իշխանության մարմնացումը, ուստի և հավասարակշռություն ստեղծող կարևորագույն օղակը: Ուշագրավ է, որ հենց վեպի սկզբում, երբ ընթերցողի առջև հայտնվում է Երկնային թագավորության

1Նույն տեղում, էջ 75:

2 Նույն տեղում, էջ 115:

3Նույն տեղում, էջ 157:

պատկերը, հեղինակը զուգահեռներ է անցկացնում երկրային կյանքի հետ. Երկնքում ևս գործում է քաղաքական որոշակի համակարգ, որն ինչ-որ առումով բռնապետություն է հիշեցնում, քանի որ ամեն հարցում գերիշխում է միայն Աստծո Վճիռը: Սակայն Աստծո՝ որպես տիրակալի, բացարձակ կամքի իրականացումը քողարկվում է քաղաքական այնպիսի հասկացությունների կիրառմամբ, ինչպիսին են Սահմանադրությունը և հանրաքվեն: Եվ չնայած Երկնքի տիրակալը թվում է հավասարկշիռ ու արդարադատ, բայց իրականում իբրև կառավարիչ դեղ է ընդունում, որը նրան Հիսուսն է տալիս. այսինքն՝ Փրկիչը անգամ Երկնքում է իրականացնում իր առաքելությունը՝ մարդկանց և Դրախտի բնակիչներին գերծ պահելով Աստծո չպատճառաբանված գայրույթից: Քաղաքական պերճախոս ենթատեքստ է պարունակում նաև Աստծո՝ ՄիքայելինՍատանա կարգելու հրամանին ի պատասխան Հրեշտակապետի հնչեցրած պատասխանը. «Իյա՛, իրոք»¹:

Սակայն Ամենակալը նաև վիրավորված է մարդկանցից, որոնք բնավ չեն ընկալում աստվածային պատվիրանները, անհնազանդ են երկնային կամքին, բայց փոխարենն ամեն ինչում Արարչին են մեղադրում: Եվ ահա Աստված հայտարարում է. «...փորձեցի՞ն վարվել Իմ նմանողությամբ, թե՞ Աստծո պատկերը նրանք ընկալում են միայն որպես հակառակորդին ցեղասպանող կերպար: Ահա սա է մեծագույն խնդիրը: Ինչպե՞ս է պատահում, որ նրանք մինչև օրս ինչ ուզում, մեկնում են և իրենց մեկնաբանությամբ ոչնչացնում են իմ արարչագործությունը»²: Ուստի Աստծուն հավատարիմ ծառա է անհրաժեշտ, որը կապահովի նրա անաչառությունը, և այդ ծառան Սատանա է: Այսպիսով՝ Սատանան Աստծո «խիղճն է», որն ապահովում է Դրախտի մաքրությունը: Արձակագիրը նրան օժտում է բավական ծանրակշիռ հատկությամբ, երբ Հրեշտակապետը նրա մասին խոսելիս ասում է. «Սատանան նման է այն բժշկին, ով աշխատում է մահացու հիվանդների հետ»³: Եվ այս արտառոց «բժշկի» առաքելությունն առավել հասկանալի դարձնելու նպատակով Միքայելի շուրթերից հնչում են դրվատանքի հետագա խոսքերը. «Սատանան այս բժիշկներից էր, որ շատ լավ գիտեր, որ իր կողմից փորձվողների մեծ մասը միանշանակ չի դիմանալու մեղքի գայթակղությանը, բայց նա, միևնույնն է, գնում էր նրանց փորձելու: Նա փորձում է ամեն անգամ, փորձում ու փորձում է կրկին՝ ամեն անգամ էլ հույս ունենալով, որ այս մեկը կհաղթահարի քաղցկեղը: Այս առումով Սատանան եզակի վաճառական

1Նույն տեղում, էջ 25:

2Նույն տեղում, էջ 19:

3Նույն տեղում, էջ 103:

Է, ով ապրանք է առաջարկում, սակայն չի ցանկանում, որ դու այն գնես: Բայց վստահ եղիր, նա այնքան հմուտ է վաճառում, որ հազիվ թե հրաժարվես»¹:

Ի տարբերություն մարդ արարծի՝ Սատանան հավատարիմ է Աստծուն և իրեն փնտրող պատանու դեմքին է նետում հետևյալ բառերը. «Իսկ կուզե՞ս քեզ ասեմ ավելին: Ավելի լավ է Աստծո կողմից լինել նզովված գավակ, քան քո նման մեկը: Գիտե՞ս ինչու: Որովհետև այդ նզովքը ստանալուց հետո ես երբեք չդավաճանեցի Աստծուն, այլ մշտապես գործեցի նրա կամքի համաձայն: Իսկ դո՛ւ, ի՛նչ արեցիր, թողած Աստծուն, ինձ էիր փնտրում»²: Սատանան Աստծո արդարադատության ջերմեռանդ պահապանն է, և «Սատանան զոհեր չուներ, նա փորձում է բռնաբռնել, և նա չի գործում որպես որսորդ, որը թաքնված է և սպասում է իր զոհին թփերի հետևից: Ընդհակառակը, նա գործում է բացահայտ: Նա լինում է գրեթե ամեն տեղ, որտեղ արդարությունը պիտի տիրեր, որտեղ իմաստությունը պիտի ճառվեր, որտեղ սեր պիտի բաշխվեր»³: Եվ դեռ ավելին. «...Սատանան Աստծո համար այն կերպարն է, որը ժամանակ առ ժամանակ փոխում է նրա ակնոցները: Զանի որ Աստված կատարյալ բարի է, ապա մշտապես հակված է ողորմածության, սակայն Սատանան այն կերպարն է, որ ժամանակ առ ժամանակ Աստծո վարդապետյն ակնոցները փոխում է սև ակնոցներով: Եթե չլինի Սատանան, ապա Աստված կների, ու դրախտում կընդունի բոլորին, անխտիր բոլորին: Դրա հետևանքով քաոս կառաջանա դրախտում, այդ քաոսը կոչնչացնի մեզ. այնուհետև կոչնչացնի ձեզ, կամ ավելի ճիշտ կլինի ասել, դուք կոչնչացնեք միմյանց»⁴: Հետևաբար Սատանան «փրկիչ» է, որն ապահովում է բարու և աչրի համամասնությունը ուստի և աշխարհի անխափան ընթացքը:

Այսպիսով, Հարություն Զեշիշյանի «Սատանայի ընտրությունը» վեպը թեև ունի լեզվաոճական որոշ մեղանչումներ, այնուամենայնիվ դրանք «փոխհատուցվում են» գաղափարական խորությամբ և խորհրդանշանների ինքնօրինակ կիրառությամբ. այսպես՝ կատուն, որը քրիստոնեության մեջ սատանայի մարմնացումն է, բացում է ննջասենյակի դուռն ու Աստղիկին ցույց տալիս նրա գիշերային հյուրի իրական եղությունը՝ Միքայել Հրեշտակապետին: Իսկ քառաթև խաչի խորհրդանշանը, ինչպես հայտնի է, մատնանշում է Երկնքի Արքայության բացվելը, դժոխքի

1 Լույս տեղում, էջ 104:

2 Լույս տեղում, էջ 131:

3 Լույս տեղում, էջ 5:

4 Լույս տեղում, էջ 101-102:

ավերումը, շնորհների բաշխումը և մեղքերի թողությունը: Դիտելի է, որ այն հայտնվում է հենց Սատանայի ձեռքում ու տրամաբանական ավարտին հասցնում վեպի գաղափարախոսությունը: Այս ամենից բացի՝ վեպում առկա է նաև ուշագրավ բառախաղ. երբ Աստված բարկանում է Դրախտի բնակիչների վրա՝ մարդկանց ոչխարներ անվանելու համար, պնդում է, որ նրանց կոչեն հոտ, քանի որ ոչխարը հեշտ մոլորվող է և առաջնորդի կարոտ, իսկ հոտն ամբողջականություն է, համայնք և կարող է ինքնուրույն որոշումներ կայացնել: Ուշագրավ է նաև Սատանային սկամա սպանող կնոջ անունը՝ Եվա, որը խորհրդանշում է մարդկության նախամորը. արգելված պտուղն ուտելով՝ Եվան մարդկությանը դատապարտեց հավերժական տանջանքների, իսկ Սատանային սպանելով՝ Նպաստեց Երկինքը համակած քառսի առաջացմանը:

«Սատանայի ընտրությունը» վեպի վերլուծության ավարտին մեկերկու անդրադարձ կատարեմ նաև այնտեղ հանդիպող թվերին՝ դրանց վերագրվող բնութագրումների տեսանկյունից: Այսպես՝ Եվան 33 տարեկան է, որը խորհրդանշում է նաև Հիսուսի տարիքը. ասել է թե՛ քրիստոնեության համար ճակատագրական թիվ, երբ Աստծո միածին Որդին փրկեց աշխարհը, իսկ Եվան Աստծուն կանգնեցրեց նոր Սատանա ընտրելու և Երկնքի ու Երկրի համամասնությունն ապահովելու կնճռոտ ինդրի առջև: Սատանայի հուղակավորության ժամանակ յոթ կողմերից հնչում են յոթ շեփորներ, և վառվում են յոթ մոմեր, իսկ այդ թիվը համարվում է աստվածային ու դյուբական, ուստի շեշտադրում է Սատանայի բացառիկությունն ու կարևորությունը: Իսկ այն, որ Սատանան մարդկանց փորձության է ենթարկում երեք անգամ, անշուշտ, խորհրդանշում է Սուրբ Երրորդությունը, իսկ Միքայել Հրեշտակապետի երկու անգամ ձեռնարկած ճամփորդությունը՝ Հիսուսի երկակի բնույթը՝ իբրև Աստված և իբրև մարդ:

HAYKANUSH SHARURYAN «THE ISSUE OF KINDNESS AND EVIL IN MODERN ARMENIAN PROSE (HARUTYUN KESHISHYAN «THE CHOICE OF SATAN»)

The article is dedicated to the comprehensive analysis of the idea of kindness and evil in the novel by Harutyun Keshishyan «The Choice of Satan». It is noteworthy that the author has given a new solution to this problem by putting forward the idea that God and Devil do not contradict but do rather supplement each other. The above mentioned novel is also full of symbols which give this work a unique depth and are underlining the peculiar rendering of the traditional notion of kindness and evil. The subtle politicization of this idea is, indeed, a novelty.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՉՅԱՆ - ԵՂԻԱ ՏԵՍԻՐՃԻՊԱՇՅԱՆ. ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ 4

PETROS A. DEMIRCHYAN - YEGHIA TEMIRCHIPASHYAN- AESTHETIC VIEWS 4

ПЕТРОС ДЕМИРЧЯН - Е.ТЕМИРЧИПАШЯН: ЭСТЕТИЧЕСКИЕ ВЗГЛЯДЫ 4

ՍՈՒԲԱՆՆԱ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՏԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶԿԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ 34

SUSANNA HOVHANNISYAN - AKSEL BAKUNTS AND WAYS OF DEVELOPMENT OF THE NATIONAL LANGUAGE 34

СУСАННА ОВАНЕСЯН - АКСЕЛЬ БАКУНЦ И ПУТИ РАЗВИТИЯ НАЦИОНАЛЬНОГО ЯЗЫКА 34

ԼԻԼԻԹ ՍԵՅՐԱՆՅԱՆ - Ն.ՍԱՐԱԳՅԱՆԻ «ԿԱԽԱՐԴՂԱՆՔ» ԵՎ «ՀՍԿՈՒՄ» ԵՐԿԵՐԻ ԽՈՐՀՐԴՊԱՏԿԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 43

LILIT SEYRANYAN - IMAGE AND SYMBOLIC SYSTEM OF N.SARAFYAN'S WORKS «MAGIC» AND «VIGIL» 43

ЛИЛИТ СЕЙРАНЯН - ОБРАЗНО-СИМВОЛИЧЕСКАЯ СИСТЕМА ПРОИЗВЕДЕНИЙ Н.САРАФЬЯНА «ВОЛШЕБСТВО» И «БДЕНИЕ» 43

ՍԱԹԵՆԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ - ԱՐՔԱՅԻ ԿԱՍ ԱՍՏՎԱԾԱՄԱՐԴՈՒ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ ԼԵՎՈՆ ԽԵՉՈՅԱՆԻ «ԱՐՇԱԿ ԱՐՔԱ, ԴՐԱՍԱՄԱՏ ՆԵՐՔԻՆԻ» ՎԵՊՈՒՄ 58

AVETISYAN SATENIK - SIGNS OF THE IDENTITY OF A KING OR A MAN OF GOD IN LEVON KHECHOYAN'S NOVEL «ARSHAK KING, DRASTAMAT EUNUCH» ... 58

АВЕТИСЯН САТЕНИК - ПРИЗНАКИ ЛИЧНОСТИ ЦАРЯ ИЛИ ЧЕЛОВЕКА БОЖЬЕГО В РОМАНЕ ЛЕВОНА ХЕЧОЯНА «ЦАРЬ АРШАК, ЕВНУХ ДРАСТАМАТ» 58

ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՐԵՆ ԱՐԱՎԱՄՅԱՆ - ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈՔՅԱՆ. ԲԱՌԻ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ... 72

SUREN AVRAHAMYAN - «VARDAN HAKOBYAN. WORD AESTHETICS» 72

СУРЕН АБРААМЯН - «ВАРДАН АКОПЯН. ЭСТЕТИКА СЛОВА» 72

ՀԱՅՎԱՆՈՒԹ ԾԱՐՈՒԹՅԱՆ - ԲԱՐՈՒ ԵՎ ՉԱՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
 ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԱՐՁԱԿՈՒՄ (ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹԵՇԻՇՅԱԼ
 «ՍԱՏԱՆԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ») 102

HAYKANUSH SHARURYAN - «THE ISSUE OF KINDNESS AND EVIL IN MODERN
 ARMENIAN PROSE (HARUTYUN KESHISHYNA «THE CHOICE OF SATAN»)» 102

АЙКАНУШ ШАРУРЯН - «ПРОБЛЕМА ДОБРА И ЗЛА В СОВРЕМЕННОЙ
 АРМЯНСКОЙ ПРОЗЕ («ВЫБОР САТАНЫ» АРУТЮНА КЕШИШЯНА)» 102

ԱՐՄԵՆ ԱՎԱՆԵՍՅԱՆ - ԿԱՐԻՆԵ ԽՈՐԻԿՅԱՆԻ ԱՐՁԱԿԻ ՊՈԵՏԻԿԱԼ 116

ARMEN AVANESYAN - THE POETICS OF KARINE KHODIKYAN'S PROSE 116

АРМЕН АВАНЕСЯН - ПОЭТИКА ПРОЗЫ КАРИНЕ ХОДИКЯН 116

ՍԱՀԱԿՅԱՆ ԳՈՀԱՐ - «ԺԱՄԱՆԱԿԻ ԳԵՏԸ» ՎԵՊԻ ԿԱՐՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ
 ԱՈՒՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 122

SAHAKYAN GOHARIK - THE STRUCTURE FEATURES
 OF THE NOVEL "RIVER OF TIME" 122

СААКЯН ГОАРИК - СТРУКТУРНЫЕ ОСОБЕННОСТИ
 РОМАНА «РЕКА ВРЕМЕНИ» 122

ԱՐԵՎՍՏՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՄԻՏՔ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԱՀԵ ԱՐՄԵՆՅԱՆ - ՍԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՇԵՔՍՊԻՐԻ
 «ՌՈՍԵՆ ԵՎ ՋՈՒԼԻԵՏ» ՊԻԵՍՈՒՄ (ԿԱՍ ՌՈՍԵՆՅԻ ԿԵՐՊԱՐԻ
 ԹՆՆՈՒԹՅՈՒՆ ՄԻՆՉ ՋՈՒԼԻԵՏԻՆ ՀԱՆԴԻՊԵԼԸ) 134

VANE ARSENYAN - SEXUALITY IN WILLIAM SHAKESPEARE'S PLAY
 «ROMEO AND JULIET» OR A STUDY OF THE CHARACTER OF ROMEO
 BEFORE HIS MEETING WITH JULIET 134

ВАГЕ АРСЕНЯН - СЕКСУАЛЬНОСТЬ В ПЬЕСЕ У. ШЕКСПИРА «РОМЕО И
 ДЖУЛЬЕТТА» ИЛИ ИССЛЕДОВАНИЕ ПЕРСОНАЖА РОМЕО
 ДО ЕГО ВСТРЕЧИ С ДЖУЛЬЕТТОЙ 134

ՇՈՒՇԱՆԻԿ ԹԱՄՐԱԶՅԱՆ - ԱՆՀԵՏԱՑՈՂ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏԿԵՐԸ
 ԺԵՐԱՐ ԴԸ ՆԵՐՎԱԼԻ, ԱՆՏՈՆ ՉԵՒՆՈՎԻ ԵՎ ԻՎԱՆ ԲՈՒՆԻՆԻ
 ՍՏԵՐԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 143

CHOUCHANIK THAMRAZIAN - «L'IMAGE D'UN MONDE CRÉPUSCULAIRE
 DANS L'ŒUVRE DE GÉRARD DE NERVAL, D'ANTON TCHEKHOV
 ET D'IVAN BOUNINE» 143

ШУШАНИК ТАМРАЗЯН - «ЛИКИ ИСЧЕЗАЮЩЕГО МИРА В ПРОИЗВЕДЕНИЯХ
 ЖЕРАРА ДЕ НЕРВАЛЯ, АНТОНА ЧЕХОВА И ИВАНА БУНИНА» 143

ԱՂԱՍՅԱՆ ԼՈՒՄԻՆԵ - ԱՍԵՐԻԿՅԱՆ ԵՐԱՉԱՆՔ. ԴՐԱ ՎԵՐԱԻՍՏԱՍԱԿՈՐՈՒՄԸ ՈՒ ՎԵՐԱՓՈՆՈՒՄԸ ՖԻԼԻՊ ՌՈԹԻ ԱՏԵՂԵԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ 165

LUSINE ADAMYAN - THE SUBJECT OF AMERICAN DREAM AND ITS TRANSFORMATION IN THE FICTION OF PHILIP ROTH 165

ЛУСИНЕ АДАМЯН - ТЕМА АМЕРИКАНСКОЙ МЕЧТЫ, ЕЕ ПЕРЕОСМЫСЛЕНИЯ И ПЕРЕВОПЛОЩЕНИЯ В ТВОРЧЕСТВЕ ФИЛИПА РОТА 165

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՆՈ ԵՂԻԱՉԱՐՅԱՆ, ԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ - ՄԻ ՃՇԳՐՏՈՒՄ
ՁԻՐԱՎԻ ԴԱՇՏԻ ՄԱՍԻՆ 181

VANO YEGHIAZARYAN, ARA GRIGORYAN - SPECIFICATION ABOUT THE DZIRAV PLAIN 181

ВАНО ЕГИАЗАРЯН, АРА ГРИГОРЯН - ОДНО РАЗЪЯСНЕНИЕ О ДЗИРАВСКОМ ПОЛЕ 181

ԱՆԱՀԻՏ ՀԱՎՈՐՅԱՆ - ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԻԴԱԿՏԻԿ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՇԵՏՄԱՐԱՆԻ ԱՏԵՂԾՈՒՄԸ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 189

ANANIT HAKOBYAN - THE CREATION OF REPOSITORY OF ACADEMIC LITERATURE AND DIDACTIC ACCESSORIES BY KHACHATUR ABOVYAN 189

АНАИТ АКОПЯН - СОЗДАНИЕ БАЗЫ УЧЕБНОЙ ЛИТЕРАТУРЫ И ДИДАКТИЧЕСКИХ ПРИНАДЛЕЖНОСТЕЙ ХАЧАТУРОМ АБОВЯНОМ 189

ԱԼԲԵՐՏ ՄԱԿԱՐՅԱՆ, ԱՍՏԴԻԿ ՍՈԴՈՅԱՆ - ՀԱՎՈՐ ՊԱՐՈՆՅԱՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԸ 202

ALBERT MAKARYAN, ASTGHIK SOGHOYAN - HAKOB PARONYAN'S CHILDREN'S STORIES 202

АЛЬБЕРТ МАКАРЯН, АСТГИК СОГОЯН - ДЕТСКИЕ РАССКАЗЫ АКОПА ПАРОНЯНА 202

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԼԻԼԻԹ ՍԵՅՐԱՆՅԱՆ - Ս.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ «ԱՐԴԻ ՀԱՅ ՊՈԵԶԻԱՅԻ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ» ԳԻՐՔԸ 216

LILIT SEYRANYAN - THE BOOK OF S. ABRAHAMYAN «THE LITERAL SYSTEM OF THE MODERN ARMENIAN POETRY» 216

ЛИЛИТ СЕЙРАНЯН - КНИГА С. АБРААМЯНА «ХУДОЖЕСТВЕННАЯ СИСТЕМА СОВРЕМЕННОЙ АРМЯНСКОЙ ПОЭЗИИ» 216

**ՀՀ ԳԱՎ Մ. ԱՐԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ

**ԻԲ
2021-1**

**Համարի թողարկման պատասխանատու՝
Սուրեն Աբրահամյան**

Տեխնիկական խմբագիր՝ Արմեն Ավանեսյան

Լրատվական գործունեություն իրականացնող՝ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտ ոչ առևտրային կազմակերպություն
03.03.1997

(գրանցման 286.0120, վկայական F 003222)

Հասցե՝ Գր. Լուսավորչի 15

Հեռ. և հեռատիպ՝ 010-56-32-54, e-mail՝ litinst.@sci.am,
055-62-44-77, Էլ. հասցե՝ litinst.@sci.am

Ստորագրված է տպագրության 14.05.2021:

Տպաքանակ՝ 200: Ծավալը՝ 14.5 տպ. մամուլ:

Գինը պայմանագրային: